

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. հունվարի 10-ից 16-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Հունվարի 11-13-ի գիշերը, 15-ի ցերեկը, 12-ին, 16-ին առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ: Հունվարի 10-ի և 13-ի ցերեկը, 14-ի գիշերը շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Հունվարի 14-ի գիշերը բոլոր բնակավայրերում՝ ձյան տեսքով:

Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է՝ Ամբերդում՝ 53մմ, Զերմուկում՝ 51մմ, Ապարան լճայինում՝ 39մմ, Անանուն լ-ցքում՝ 31մմ, Հրազդանում՝ 28մմ, Ֆանտանում՝ 26մմ, Ապարանում՝ 24մմ Արենիում՝ 22մմ, Մեղրիում՝ 20մմ: Մյուս շրջաններում 5-19մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունվարի 10-13-ին եղել է նորմայից բարձր 3-8 աստիճանով, 14-ին՝ նորմային մոտ դրական և բացասական շեղումներով (Արարատյան դաշտում բարձր՝ 2-4 աստիճանով), 15-16-ին ցածր 2-5 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Տավուշում՝ +11...+14°C, Սյունիքի հովիտներում՝ +10...+16°C, նախալեռներում՝ +11...+12°C, Լոռիում՝ +8...+13°C, Արարատյան դաշտում՝ +4...+5°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +7°C, լեռներում՝ +5°C, Գեղարքունիքում՝ 0...+6°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +2...+4°C, լեռներում՝ +1...+2°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +4°C, լեռներում՝ +2...+4°C, Շիրակում՝ -1...+2°C և Երևանում՝ +3...+4°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Շիրակում՝ -14...-19°C, Արագածոտնում՝ լեռներում՝ -18...-20°C, նախալեռներում՝ -9...-12°C Գեղարքունիքում՝ -11...-18°C, (Մասրիկում՝ -24°C), Կոտայքում՝ լեռներում՝ -14...-18°C, նախալեռներում՝ -12°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -17°C, նախալեռներում՝ -6°C, Լոռիում՝ -8...-17°C, Արարատյան դաշտում՝ -8...-10°C, Տավուշում՝ -5...-7°C, Սյունիքի նախալեռներում՝ -10...-12°C, հովիտներում՝ -1...-8°C և Երևանում՝ -8...-10°C:

Հունվարի 10-14-ին դիտվել է մառախուղ առանձին շրջաններում՝ 200-500մ տեսանելությամբ, իսկ առանձին օրերին՝ Հրազդանում, Գյումրիում, Արթիկում, Արմավիրում՝ 50մ տեսանելությամբ:

Հունվարի 10-15-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում, պողոթկումների ժամանակ հասնելով 15-20մ/վրկ: Հունվարի 13-14-ին Ամասիայում և Աշոցքում դիտվել է բուք:

Հունվարի 17-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը կազմում է Արագած բ/լ-ում՝ 93սմ, Զերմուկում՝ 60սմ, Ամբերդում՝ 54սմ, Ապարանում՝ 45սմ, Հրազդանում՝ 43 Ամասիայում՝ 40սմ, Աշոցքում՝ 29սմ, մնացած լեռնային շրջաններում՝ 3-28սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2 սմ-ով (09.01.22-16.01.2022թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.40մ (16.01.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 12 սմ-ով: